Ինչպես օգտվել շրջանառության հարկի աջակցության ծրագրից

www.src.am

Ովքե՞ր կարող են օգտվել

Աջակցության ծրագրից կարող եք օգտվել, եթե միաժամանակ բավարարում եք հետևյալ պայմաններին՝

- 2024 թվականին իրականացրել եք առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն,
- 31.12.2024 թվականի դրությամբ և 2025 թվականի առաջին և երկրորդ եռամսյակներում հանդիսացել եք բացառապես շրջանառության հարկ վճարող,
- դիմումի ներկայացմանը նախորդող օրվա դրությամբ ամբողջությամբ վճարել եք շրջանառության հարկը,
- աջակցության տրամադրման եռամսյակի արդյունքներով՝ շրջանառության հարկի գումարը գերազանցում է տվյալ եռամսյակում իրացման շրջանառության 5 տոկոսը կամ 01.01.2025 թվականի դրությամբ ունեք շրջանառության հարկի գումարից չնվազեցված և հաջորդ եռամսյակ փոխանցված գումար,
- դիմումի հետ միասին հարկային մարմին պետք է ներկայացնեք 01.01.2025 թվականի դրությամբ ապրանքային մնացորդի մասին տեղեկություններ:

Որքան է աջակցության չափը

Աջակցություն կտրամադրվի համապատասխան եռամսյակի համար առևտրական (առք ու վաճառքի) գործունեության մասով վճարման ենթակա շրջանառության հարկի և նույն եռամսյակում այդ գործունեության իրացման շրջանառության 5 տոկոսի տարբերության չափով, ինչպես նաև՝ 1.5 տոկոսի տարբերության չափով՝ լրացուցիչ աջակցություն, եթե մինչև 2025 թվականի հունվարի 1-ն ապրանքների ձեռքբերման ծախսերի մասով ունենաք հարկի գումարից չնվազեցված և հաջորդ հաշվետու եռամսյակ փոխանցված գումար:

Հիշեք, որ լրացուցիչ աջակցության գումարը չի կարող գերազանցել կատարված ձեռքբերումների հաշվին ձևավորված՝ հարկի գումարից չնվազեցված և փոխանցված գումարի 1.375-ապատիկը:

Ինչպես դիմել աջակցության համար

Աջակցության ծրագրից օգտվելու համար **compensation@taxservice.am** էլեկտրոնային փոստի հասցեին պետք է ուղարկեք դիմում և ապրանքային մնացորդի մասին տեղեկություններ:

2025 թվականի առաջին եռամսյակի համար աջակցություն ստանալու համար պետք է դիմել մինչև 2025 թվականի **մայիսի 10-ը** ներառյալ, իսկ 2025 թվականի երկրորդ եռամսյակի համար՝ մինչև 2025 թվականի **օգոստոսի 1-ը** ներառյալ:

Կարևոր է իմանալ

Եթե աջակցության գումարը ստանալուց հետո հարկ վճարողը ներկայացնում է շրջանառության հարկի ճշտված հաշվարկ, որի հետևանքով արձանագրվում է ավել վճարված աջակցության գումար, ապա այն ճշգրտման օրվան հաջորդող 15 աշխատանքային օրվա ընթացքում պետք է վերադարձնել պետական բյուջե՝ գանձապետարանի՝ այդ նպատակով բացված համապատասխան հաշվին: